

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՂԱՅ ՏԱՄԱՏԵԱՆ

Աւագանի անունով Արթուն Կարապետ, որդի Գրիգոր Աւագ Քահանայի եւ Սիլվայի, ծնած է 14 Սեպտեմբեր 1988ին, Իսթանպուլ: Իր նախակրթութիւնը կը ստանայ Արամեան-Ունճեան Վարժարանին մէջ: Կեդրոնական Վարժարանէն շրջանաւարտ ըլլալէ յետոյ Քատիր Հաս Համալսարանի Էլէկտրոնիկ Ճարտարագիտութեան Ֆաքիւլթէին մէջ կը սկսի հետեւիլ բարձրագոյն ուսման:

Դպրութեան չորս աստիճանները կը ստանայ 2006ին ձեռամբ Շահան Արքեպիսկոպոսի: Նոյն տարի 13 Յուլիսին Ս. Թարգմանչաց Վարդապետաց տօնին ուրար կրելու արտօնութիւն կը ստանայ ձեռամբ Մեսրոպ Բ. Պատրիարքի: Արամ Արքեպիսկոպոսի ձեռամբ 17 Մայիս 2009ին կը ձեռնադրուի կիսասարկաւագ, իսկ 25 Սեպտեմբեր 2011ին՝ սարկաւագ: 12 Փետրուար 2015, Ս. Վարդանանց Զօրավարաց Տօնին, Ֆէրիգիւղի Եկեղեցոյ մէջ, Արամ Արքեպիսկոպոսի ձեռամբ կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի եւ կը վերակոչուի՝ Յարութիւն Արեղայ:

Կ'անդամակցի Գնալը Կղզիի Ս. Ներսէսեան Դպրաց Դասու Տնօրէն Խորհուրդին, վարելով ատենադարի պաշտօնը: Մաս կը կազմէ Պատրիարքական Աթոռի «Արմաշ Դպրաց Խումբ»-ին եւ Գատրգիւղի «Ս. Թագաւոր Դպրաց Դաս Երգչախումբ»-ին: Պատրիարքական Աթոռոյ մէջ կը պաշտօնավարէ միջեկեղեցական, տեղեկատուական եւ հրատարակչական բաժանմունքներէն ներս: Նաեւ կը մասնակցի Պոլսոյ Միջեկեղեցական Խորհուրդի աշխատութիւններուն, որպէս քարտուղար:

Ձեռնադրութենէն յետոյ պաշտօնի կը կոչուի Ս. Թագաւոր Եկեղեցոյ մէջ, որպէս Քարոզիչ: Իր պաշտօնին առընթեր 2016-2018ի միջեւ Իշխանաց Կղզեաց Հոգեւոր Հովիւի պաշտօնը կը վարէ: 2017-էն սկսեալ Գալֆաեան Տան մէջ կը դասաւանդէ նաեւ Կրօնագիտութիւն եւ բարոյագիտութիւն: Այցելու երիցութեան պաշտօնը ստանցնած է նաեւ Գանտիլլի Ս. Երկոտասան Առաքելոց Եկեղեցոյ:

2012ին կ'աշխատասիրէ «Ս. Երկիրը Կը Կանչէ» խորագրեալ գիրքը, իսկ 2017ին գրի կ'առնէ «Քառասնօրեայ Խոհեր» գիրքը: Նաեւ տարբեր առիթներով «Ժամանակ» եւ «Մարմարա» Օրաթերթերու մէջ գրի կ'առնէ հոգեւոր բնոյթով պատգամներ: